

Վանֆետ, սուրջ, թէյ և այլն)։ Պատանեկական հասակում սեռական ցանկութիւնների հետ միասին ալկահոլը միաժամանակ թուլացում է զիմադրող կամքը և ընդհակառակը աւելի զոգոսում սեռական ֆունկցիաները։ Պրոֆեսոր Տարնովսկին իւր բազմամեայ փորձերի հիման վերայ հաստատում է, որ առնական ցանկութիւնը պատանիները մեծ մասամբ կորցնում են ալկահոլի օզդեցութեան տակ։ Էմմինգհաուզը, որը աւելի մեծ ուշադրութեամբ հետեւի է և զննել մանկանց հոգեկան աննորմալ դրութիւնները, նկատում է, որ մինչև իսկ երեխայական հասակի մէջ ալկահոլիկ պոխտպատները բացառիկ երևոյթներ չեն, այլ յաճախակի կրկնուող։ Սովորական է դարձել կեանքի մէջ այն առաժը, որ «գինի ուրախ աւնէ զմարդ» — սակայն՝ ի նկատի ունենալով ալկահոլով ուրախ տրամադրութիւն զարթեցնելու տիւրը և կործանիչ հետեանքը, իւրաքանչիւր ծնողի և դաստիարակի պարտքը պիտի լինի՝ յիշել և յիշեցնել պատանիներին և երիտասարդներին մանաւանդ, որ պատանեկութիւնը — ասում է Բողենֆելդ — առանց գինու էլ երջանկութիւն է։

Պեղ. Տ. Թսվմ.

ԿԱՆՈՆՆԵՐ ԴԱՍՍՏՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1. Երբէք դասարան չմտնել առանց նախապատրաստուելու։
2. Նախապատրաստուելիս պարզ պէտք է լինի՝ թէ ինչ պէտք է կրկնել ամենից առաջ և ինչպիսի տնային աշխատանք ստուգել։
3. Ապա նայեցէք, ջոկեցէք և կարգի բերէք այն նոր նիւթը, որը դուք ի նկատի ունիք աւանդել, սովորեցնել, կամ վարժեցնել աշակերտութեան. բաժանեցէք այդ նիւթը մասերի այնպէս, որ կարելի լինի լաւ մատակարարել դասարանին։
4. Չչեղւելով ընդունած դասադրքից դուք պէտք է այնքան լաւ տիրապետէք նիւթին, որ անցնէք դասարանում առանց դասադրքի օգնութեան։
5. Այն օրինակները, որ օժանդակելու և մեկնաբանելու են ձեր բացատրութիւնները կամ վարժութիւնները, ընտրեցէք տանը կամ ինքներդ կազմեցէք, սակայն այնպէս իւրացրէք, որ ազատ կարողանաք օգտուել դասատուութեան ժամանակ։
5. Եթէ ձեր նախապատրաստութիւնը վերաբերում է այնպիսի նիւթի, որը պէտք է անդիր սովորեն աշակերտները (ինչպէս օր. բնաբաններ, հաւատամք, երգ, ոտանաւոր), այդ դէպքում ինքներդ պէտք է սովորէք այդ նիւթը անգրի նման կամ թարմացնէք ձեր յիշողութեան մէջ։ Այն դասին, որ պէտք է պատասխանէ աշակերտութիւնը յիշողութեամբ, դուք էլ պէտք է հաստատ կերպով

խմանաբ այդ միևնույն յիշողութեամբ: Առաւել լաւ կլինի, եթէ բացատրութեան ժամանակ եւ այդ նիւթը աւանդէր յիշողութեամբ:

7. Աշխատեցէք նոր բացատրելիք նիւթը կապել հնի-աշակերտների անդածի հետ. Այդ նպատակին հասնելու համար պէտք է թարմացնէք ձեր յիշողութեան մէջ թէ ձեզ յանձնւած և թէ ստորին դասարանների բոլոր առարկաները և ապա թէ օգտէք նրանցից: Զգուշացէք չօշափել բարձր դասարանների նիւթերը, որոնք դեռ անմատչելի և անըմբռնելի են աշակերտութեան համար:

8. Լաւ կլինի, որ ինքներդ հաշիւ տաք ձեզ նախապատրաստւելիս, նշանակէք դրաւոր կերպով թեկուզ շատ համառօտ և էական գծերով աւանդելիք նիւթը, դասի ընթացքը և օրինակները:

9. Որքան աւելի ջանք գործ դնէք ընտելանալու և վարժւելու նախապատրաստութեանը, այնքան աւելի հեշտ և շուտ կյաջողութիւնք նախապատրաստութիւնը, այնքան աւելի եզտաւէտ կհանդիսանայ այդ և պարզ ու որոշ կլինին այն մտաւոր, հոգեկան խնդիրները, այն պահանջները, որ ունեն ձեզ մօտ սովորող սաները: Բոլորը մինչև իսկ ձեր ոճն անգամ պէտք է յարմարեցնէք այդ սաների հետ:

10. Ամեն դասից յետոյ ճիշտ հաշիւ տուէք ձեզ՝ ձեր աւանդած դասի և այն սխալների մասին (ձեր կամ տեսչի կարծիքով), որ թոյլ էք տւել հարցնելիս կամ սովորեցնելիս, վերաբերմունքի թէ կարգապահութեան ժամանակ:

11. Դասը պէտք է սկսել դանդաղ տալուց անմիջապէս յետոյ և զանգից յետոյ էլ վերջացնել:

12. Չսկսել դասը, եթէ բոլոր աշակերտները նստած չլինեն միանգամայն ուղիղ, ձեռքերը սեղանի վրայ, ոտքերը հանգիստ: Այդպէս պէտք է վարւել նաև այն ընդհատումների ժամանակ, երբ կարիք է զգացւում հաւաքել կամ հանել գրքերը և դասական սխալները:

13. Չսկսել դասը այսպիսի հարցերով. «Ինչ է տւած», «Օրտեղ կանգ առանք մենք», «Ինչ անցանք մենք անցեալ դասին», որովհետև այդ բոլորը ամենից լաւ պարտաւոր է իմանալ ինքը դասատու ուսուցիչը:

14. Եթէ որեւէ բան տւել էք անդիւր կամ յիշողութեամբ սովորելու, ապա ամենից առաջ հէնց այդ հարցերէ և թողէք որ պատասխանեն:

15. Ամեն ժամանակ, երբ աշակերտներն են պատասխանում, թողէք որ խօսեն պարզ ու մէկին, ստուգեցէք, եթէ կասկածելի է, թէ արդեօք լսում է խօսողի ձայնը դասարանի միւս անկիւնում:

16. Եթէ դրաւոր աշխատանքներ էք տւել կարգադրեցէք. «հանել տետրակները»: Մինչև որ բոլորը պատրաստ չլինեն չսկսել:

վարժութիւնները: Միևնոյն ժամանակ աշակերտներէից մէկին դրատախտակի մօտ պէտք է հանել և գրել տալ աշխատանքի մի մասը, միւսին կարգացնել, իսկ եթէ թարգմանութիւն է — թարգմանել: Հըսկոդութիւն կատարելու նպատակով վերցրէք մէկ կամ երկու տետրակ և ընդգծէք սխալները: Այսպիսով եթէ թարգմանուած է, օրինակ, հինգ նախադասութիւն, դուք ինքներդ էլ կարող էք ուղղել 5 կամ 10 տետրակ, 5 աշակերտ թող գրեն, 5-ը պատասխանեն բանաւոր: Բացի այդ դուք ինքներդ պէտք է աչքի անցկացնէք ևս մի քանի տետրակներ համոզւելու համար, թէ արդեօք կատարել է աշակերտը իր աշխատանքը և ուղղել է սխալները: Սխալները պէտք է մատնացոյց անեն իրենք աշակերտները: Ապա կարգադրել «փակել կամ դարակները դնել տետրակները»:

17. Պէտք է կրկնել նախորդ դասին անցածը, եթէ այդ շէկատարել 5 և 6 կետերի համաձայն:

18. Դրա հետ կապուած է նորը աւելի քիչ չափով:

19. Եթէ հարցը գիտական առարկաների, հետեւապէս յիշողութեան մէջ տպւորելու մասին է, այդ դէպքում հարցրէք ամեն մի մասը առանձին բացատրելուց յետոյ և միջոց տւէք լաւ ըմբռնելու, այդպէս վարւէք նաև մեծ կտորներ բացատրելուց յետոյ:

20. Իսկ եթէ (օր. լեզուներ և մատեմատիկա սովորեցնելիս) զլրատու գործը աշակերտութեանը քննելացնելն ու հմուտ դարձնելն է, այդ դէպքում վարժեցրէք աշակերտներին օրինակներով, մասամբ ձեր կ'սզմածներից, մասամբ ընդունւած դասագրքից բերելով:

21. Անտարակոյս խուսափեցէք շեղումներից և զբաղւեցէք միայն ձեր գործով: Սակայն այնպիսի դէպքերում, որտեղ աշակերտութեան կողմնակի գիտութիւնը կարող է օժանդակել ձեր բացատրութեան, օգտուեցէք այդ հանգամանքից և կապեցէք ծանօթը անծանօթի հետ:

22. Ասիթ հանդիսացած դէպքում հաստատեցէք ձեր ասածը և ցոյց տւէք այդ քարտէզի վրայ, նկարներով, կազապարներով և այլն, բայց զլրատուապէս օգտուեցէք գրատախտակից:

23. Եթէ դուք կամենում էք թեւադրել աշակերտներին (օր. բնագիրը թարգմանութեան համար), աշխատեցէք, որ ձեր ձայնի կամ գրատախտակի օգնութեամբ ամեն ինչ լինի պարզ ու հասկանալի: Հետու պահէք ձեզ ամեն տեսակ անպէտք ու անօգուտ թեւադրութիւններից: Ամենին չպէտք է շեղումներ կամ լրացումներ անել ընդունւած դասագրքից:

24. Մի պարապէք զրգուած դրութեան մէջ, եթէ, օրինակ, բարկացած էք աշակերտի վրայ: Աւելի լաւ է ընդհատէք դասը և շարունակէք այն ժամանակ միայն, երբ հանգստացած կզգաք ձեզ, որովհետև զրգուած դրութիւնը խիստ զբաւում է աշակերտների

ուշադրութիւնը և խանգարում գործին, իսկ չփութեամբ աշակերտը երբէք չի կարող սովորել կամ պատասխանել:

25. Հարցերը ուղղեցէք բոլոր աշակերտներին: Իւրաքանչիւր հարցից յետոյ ընդմիջում արէք և ապա կանչեցէք իւրաքանչիւր աշակերտի առանձին առանձին ձեր հարցին պատասխան տալու համար: Կանչեցէք ազգանունով, հետևաբար դուք պէտք է իմանաք ձեր աշակերտների ազգանունները և կարողանաք արտասանել և գրել կանոնաւոր կերպով:

26. Սովորութիւն մի դարձնէք հարցնել աշակերտութեան հերթով, հակառակ դէպքում անուշադիր կլինեն այն աշակերտները, որոնց հերթը դեռ հասած չի լինի:

27. Հնար եղածին չափ պէտք է աշխատել, որ ամեն դասի բոլոր աշակերտներին էլ հարցեր տրւի: Մեծ սխալ է տասը աշակերտի ամեն մէկին հինգ անգամ հարցեր առաջարկել, իսկ երեսունին և ոչ մի:

28. Չգրազուել մէկ աշակերտով միւսներին պարապ և անուշադիր թողնելով:

29. Եթէ ձեր առաջարկած հարցին մի քանի աշակերտներ ամենին չկարողանան պատասխանել կամ ճիշտ պատասխան չտւին և յետոյ միայն դուք ստացաք ձեր հարցի ճիշտ պատասխանը կըրկնէք կամ կրկնել տէք մի քանիսին: Իսկ ուղիղ պատասխանը հարկաւոր չէ կրկնել կամ զանազան բացականշութիւններ անել, ինչպէս—«ճշմարիտ է», կամ «չատ գեղեցիկ», «լաւ», «այո», «ի հարկէ», «հասկանալի է» և այլն: Մի քաշէք թիթիւ ընդմիջումներ անել, եթէ կարիք էք զգում նախապատրաստել յաջորդ հարցի համար, հարցը պէտք է տալ նախամտածեամբ կերպով, իսկ մտածողութիւնը ժամանակ է պահանջում:

30. Եթէ դուք չստացաք ձեր առաջարկած հարցի ճիշտ պատասխան, շարունակեցէք հարցնել ուրիշ աշակերտների ևս: Իսկ եթէ նկատում էք, որ անօգուտ է շարունակելը, մի ստիպէք աշակերտներին գուշակութիւններ անել և իզուր տեղը ժամանակ մի կորցնէք:

31. Երբէք մի հարցնէք այնպիսի բաներ, որոնց մասին տեղեկութիւն չունեն աշակերտները: Դուք պարտաւոր էք իմանալ, հիմնւած ձեր անցածի վրայ, թէ ինչ բան գիտեն աշակերտները և ինչ ոչ: Ամօթ է, եթէ աշակերտները շատ տեղին պատասխանեն «այդ դեռ չենք անցել»:

32. Սովորեցէք յաջող հարցեր առաջարկել, ձեր հարցը բովանդակութեան տեսակէտից պէտք է լինի պարզ, ձևի տեսակէտից կարճ իսկ քերականօրէն կանոնաւոր, այսինքն այնպէս պէտք է ձևակերպել, որ հարցական բառը ճիշտ իր տեղին լինի: Եթէ նկատ

տու՛մ էք, որ ձեր առաջարկած հարցը անյաջող է, նախ քան հարցի պատասխանը պահանջելը, ձևակերպեցէք աւելի պարզ ու համառոտ հարց: Մի բարդ ու անկանոն հարցի փոխարէն՝ կարելի է առաջարկել երեք կանոնաւոր, պարզ ու համառոտ հարցեր:

33. Մի ընտելայնէք աշակերտներին այնպիսի հարցերի, որոնց պատասխանը լինելու է «այո» կամ «ոչ»:

34. Ամենից դժւար է առաջարկել կանոնաւոր և հետեւողական կարգով այսպէս սկսած վերլուծական հարցերը: Այստեղ պէտք է ցոյց տաք, որ դուք տիրապետու՛մ էք ձեր աւանդած նիւթին, քա՛մաբանական-նախապատրաստութիւն ունիք և որ աշխատում էք կանխամտածօրէն:

35. Կարելի է ուղղակի հարցերի դարձնել անուղղակի, օրինակ, փոխանակ հարցնելու թէ, «ինչու համար է այստեղ գրւած accus, e int». Կարելի է հարցնել, «բացատրեցէք դուք ինձ այն պատճառները, որոնց հիման վրայ...»

Բայց գերազասութիւն տրւում է ուղղակի հարցերին:

36. Մի ընդհատէք աշակերտին աննշան սխալների համար, թոյլ տւէք նրան վերջացնել իր նախադասութիւնը կամ ասելիքը, ապա թէ ուղղեցէք և լրացրէք: Ուղղեցէք միայն անկանոն արտասանութիւնները և անձիշտ արտայայտութիւնները, սակայն առանց սխալը չեշտելու:

37. Մի նստէք դասարանում, այլ կանգնեցէք: Մի յենուէք կողքի վրայ, մի խաչէք ձեռքներդ և մի պահէք զրպաններում:

38. Մի զրօսնէք դասարանում, այլ ընտրեցէք ձեզ համար մի այնպիսի մշտական տեղ, որտեղից կարող են տեսնել ձեզ բոլոր աշակերտները, իսկ դուք բոլոր աշակերտներին և նրանց ձեռքերը: Ամենից յարմար է կանգնել ամբիօնի մօտ կամ ամբիօնում: Միայն այնպիսի դիրք չբռնէք, որ մեխուածին նման երևաք մի տեղում: Իւրաքանչիւր աշակերտ պէտք է իմանայ, որ դուք ամեն բոլէ կարող էք նրա մօտ լինել եթէ միայն առիթ հանդիսանայ:

39. Լուրջ պահեցէք ձեզ, որովհետև դուք պարտականութիւն էք կատարում, իսկ ամեն տեսակ պարտականութիւն լուրջ է: Մի ասէք այնպիսի բաներ, որոնք գործին չեն վերաբերում, եթէ դեռ ևս զօրեղ ազդեցութիւն չունիք դասարանում: Մի աշխատէք օտախօսութիւններ անել, իսկ եթէ ազդեցութիւն ունիք դասարանում, չպէտք է երկիւղ կրել ինքնասիրութիւն չվիրաւորող և պարզ հանաքներից:

40. Չեր աշակերտների մօտ ցոյց տւէք ձեզ միշտ իրրեւ կրթւած և ուսնալ անձնաւորութիւն: Երբէք թոյլ չտաք ձեզ նրանց վերաբերեալ գոհնիկ արտայայտութիւններ և ակնարկներ անել:

41. Յատկապէս երբէք չջշափել աշակերտի հօր կամ մօր պաշտօնները, ցեղը, նիստն ու կայքը և այլն:

42. Մի քննէք և մի շօշափէք նոյնպէս Համանակակից սօցիալական, քաղաքական և կրօնական շրջանի դանազան կուսակցական հարցեր և խնդիրներ:

43. Չունենաք սիրելիներ և չհամարձակուէք ատել աշակերտներից որ և է մէկին:

44. Գործ չածել օտար ոճեր, խօսեցէք պարզ ու հասկանալի, տրամաբանական շնչով, կարճ ու թեթև նախադասութիւններով և աչքի դարնող հետաքրքրութեամբ ձեզ գործի և լուծելիք հարցի վերաբերմամբ:

45. Միշտ ուշք դարձրէք և ի նկատի ունեցէք բոլոր աշակերտներին, բայց ոչ աչքներդ անհանգիստ կերպով այս ու այն կողմ շուռ տալով: Այդ անելու համար արտաքին և ներքին հանգստութեան հետ հարկաւոր է ունենալ նաև որոշ լարուածութիւն և զսպողական բնաւորութիւն:

46. Միշտ յիշեցէք, որ պէտք է ցոյց տաք ոչ թէ ձեր ճարտարութիւնը, այլ բաց անէք աշակերտների լեզուները:

47. Ծիծաղելի կլինի, եթէ դուք մաածէք զարմացնել ստորին և միջին դասաբանների աշակերտներին ձեր գիտնականութեամբ:

48. Ապարէզ քաշէք ոչ թէ ձեզ, այլ գործը:

49. Ամեն օր կրկնեցէք, որ զպրօց էք գալի աշակերտների համար և ոչ թէ աշակերտները ձեզ համար:

50. Անաչառ եղէք դէպի աշակերտները ամեն խնդրի նկատմամբ: Եթէ դասատւութեան կամ աշխատանքները ուղղելու ժամանակ սխալներ էք թոյլ տւէք (չէ որ դուք էլ մարդ էք), ապա ցոյց տւէք աշակերտներին, որ ճշմարտութիւնը բարձր է ձեզանից: Այդ բանը առաջ կրերի յարգանք դէպի ձեզ, ամենից առաջ որպէս մարդու, ապա որպէս ուսեալի, որպէս դաստիարակի և այդ է իսկապէս իսկական բարիքը մատաղ հոգիների համար:

51. Հետաքրքրութիւն առաջ բերէք դասաւանդութեան ժամանակ և պէտք չեն գայ այլ ևս այն յասուկ միջոցները, որ գործ են դնում կարգապահութիւնը պահպանելու համար:

52. Թոյլ մի տաք, որ մատ բարձրացնելիս աշակերտը բարձր պահի ձեռքը, կամ շարժի օդի մէջ: Առ հասարակ պէտք է արգելի մատ բարձրացնելը, եթէ հարցնում է տւած դասը, չէ որ այդ պարտաւոր են իմանալ բոլոր աշակերտները:

53. Մի թոյլ տաք, որ անկենդան դրութեան մէջ մնան աշակերտները: Եթէ դուք նկատում էք, որ աշակերտներից ոմանք թմրած զիրքով են նստած, ստիպեցէք նրանց ուղիղ նստել, մինչև իսկ վերկացրէք և նորից նստեցրէք: Առանձնապէս ուշադրութիւն դարձրէք, որ ձեռքները չլինեն սեղանի տակ կամ գրպաններում:

54. Այս առաջարկած միջոցները այն պէտք է գործադրել երբ թուլանում է ուշադրութիւնը:

55. Մի շտապէք շուտափոյթ յաջողութեան հասնել: Մի բարկանաք մի յուսահատէք և դուրս մի գաք համբերութիւնից: Անբաւարար հետեանքների պատճառը միշտ ձեր մէջ որոնեցէք:

56. Մի շտապէք հեշտութեամբ որ և է աշակերտի՝ բարոյական կամ մտաւոր կողմից անյուսալի համարել: «Դուք իմ աշակերտը չէք» կամ նման խօսքերը չհամարձակէք ասել որ և է աշակերտի:

57. Եթէ դասի ժամանակ առիթ ունիք անբաւական մնալու որ և է աշակերտից, մի բորբոքէք անմիջապէս, չէ որ ձեր առաջ կանգնածը երկխոյ է: Այնպէս նայեցէք նրան, որ նա նկատի, թէ ինչ էք ուզում նրանից և դեռ ուրիշ միջոցի չգիմէք: Եթէ նա այդ չի նկատում այդ դէպքում մի քիչ կանդ առէք, լինի այդ հարցնելու թէ բացատրելու ժամանակ և մի փոքր աւելի երկար նայեցէք նրան: Իսկ եթէ, այդ ևս չի օգնում, անհրաժեշտ է այն ժամանակ ի հարկէ, նկատողութիւն անել:

58. Նկատողութիւն անելիս, հարկաւոր չէ հայհոյել, քարոզ կարդալ կամ ծաղր ու ծանակի գիմել, լուրջ կերպով առանց գոռալու տալ անունը կամ ազգանունը և այդ արդէն բաւական է:

59. Բացի այդ, անհրաժեշտ դէպքում, ի հարկէ, կարելի է գործադրել մի շարք պատիմներ, բայց ընդհանրապէս պէտք է պատիմները փոխարինել խրատներով և յորդորներով: Եթէ դուք վրէժաւոր գործը համարում էք ոչ թէ ձեր անձնական, այլ ձեր սաների շահերը դուք հաւատացաք եղէք, որ կարելի է անցկացնել դասը առանց պատիմների:

60. Սպառնալիքներ մի կարգաք վերակացւի կամ տեսչի անունով: Ուսուցիչը ինքը պէտք է իր համար դիրք և ազդեցութիւն ձեռք բերի:

61. Մի յիշէք այն սխալը, որի համար պատժւեց աշակերտը: Եղէք անյիշաչար և ներողամիտ:

62. Դաս մի տաք այլ ևս, եթէ զանգի ժամանակ է և հոգ տարէք, որ աշակերտը ճշտութեամբ նշանակէ ուսուցչի տւածը օրատետրի մէջ:

63. Տնային աշխատանքների համար ամենից յարմար է տալ բանաւոր և գրաւոր նիւթեր անցածից, ինքնուրոյն աշխատանքներ անգիր անել մատչելի նիւթեր:

64. Եթէ սովորելու են նիւթը օտար լեզուով մի լինիք խստապահանջ: Դասի ժամանակ պէտք է աշխատէք բազմակողմանի կերպով մշակել, վեր լուծել, հասկացնել նիւթը, իսկ թարգմանութիւնը կատարել կանոնաւոր և յաջող կերպով: Այդ ժամանակ միայն կարելի է պահանջել աշակերտից, որ նա թարգմանէ տւած դասը,

բայց ոչ առանձին մանրակրկտութեամբ, աշակերտը կարող է մինչև իսկ շեղումներ անել ձեր թարգմանութիւնից, եթէ միայն չէ ազաւազում միտքը:

65. Մի մոռանաք, որ բացի ձեզանից միւսները եւ պահանջներ են անում աշակերտից, ծանրաբեռնելով նրան դասերով: Այդ պատճառով ձեր պահանջները յարմարեցրէք դասացուցակի հետ:

66. Եթէ դուք ուզողում էք մայրենի լեզուով գրած աշխատանքները, ապա անուշադիր եղէք այն բոլորի վերաբերմամբ, ինչ որ սխալ չէ, և յայտ աւելք, որ իրօք հասկանում էք, որ գործ լինիք երկխոյսի գրած շարադրութեան հետ:

67. Ձեր առաջարկած դասարանական աշխատանքները, պէտք է առաջւայ ինամբով մշակէք աշակերտների հետ միասին: Չպէտք է շտիկից դուրս ծանրաբեռնել նրանց կանոններով: Այդ աշխատանքների ծաւալը այնքան պէտք է լինի, որ նրանք կարողանան ի կատար ածել հանդիստ և կենդրոնացած:

68. Եթէ մեծամասնութիւնը սխալներ չատ է անում, չարում նակեցէք աւելի լաւ նախապատրաստել և աւելի մատչելի նիւթեր տալ:

69. Խիստ ուշադիր կերպով հետեցէք, որ չարտագրեն միմեանցից, իսկ եթէ դարձեալ գտնուեն գրաւոր աշխատանքների մէջ այնպիսի նմանութիւններ, որոնք վրայում են, որ արտագրւած է մէկը միւսից, մեղաւորը այդ գէպքում դուք էք:

70. Մի յանձնարարէք աշակերտներին ձեր տուն տանել տետրակները կամ դասարանական պիտոյքները:

71. Ուզողեցէք ուշադիր կերպով, նաեւ՝ նախորդ աշխատանքի «ուզողումն»: Մի ոչնչացրէք աշակերտական տետրակները, ինչ որ գրում էք նրանց մէջ, գրեցէք անպայման պարզ և զիւրընթեոնելի կերպով:

72. Վերագարծրէք տետրակները ճիշտ խոստացած ժամանակին:

73. Աշխատանքները վերագարծնելիս ամենեին մի ասէք կամ մի գրէք այն գոյութիւն չունեցող ձևերը, կամ ոճերը, որ թոյլ է տւել այս կամ այն աշակերտը իր տետրակում: Հակառակ գէպքում դուք կպատուաստէք այդ ձևերը ձեր աշակերտների մէջ:

Թարգմ. Ա. Ղ.